


Ա. ՍԱՐՎԱԶԵԱՆ


Գ Ե Ւ Ց Ց Ո Ւ Ւ Ր Ս

Դ Ր Ա Մ Ա

Զ Ո Ր Ս Ա Ր Ա Ր Ո Վ



PRINTED IN GREECE



Փ Ա. Ռ Բ Հ
1935

6 AUG 2010

Ա. ԱՐՎԱԶԵԱՆ

891.99

V-28

Գ Ծ Ւ Ց Դ ՈՒ Ր Ս

Դ Ր Ա Մ Ա

Զ Ո Ր Ս Ա Ր Ա Ր Ո Վ

PRINTED IN GREECE

Փ Ա Ր Ե Զ
1935


29 JUL 2013

ԴՐԱՄԱԿԱՆ ԱՆՁԻՆՔ

Տարիք

1.— ԱՆՆԻԿ ՄԵԼԻՔ-ԴԱՄԵԱՆ	28
2.— ԳՈՒՐԳԻՆ ՄԵԼԻՔ-ԱԴԱՄԵԱՆ, կաղուահա-	
shr եւ հանգողոծ, նրա ամուսինը	35
3.— ՇՈՒՇԱՆ ՄԵԼԻՔ-ԱԴԱՄԵԱՆ, Գուրզենի մայրը	55
4.— ՍՕՆԱ. ՄԵԼԻՔ-ԱԴԱՄԵԱՆ Գուրզենի բոյրը	25
5.— ՇԱՀԵՆ ԱՍԼԱՆԵԱՆ, ճարտարապետ	33
6.— ՍՐԲՈՒՀԻ, ՄԵԼԻՔ-ԱԴԱՄԵԱՆՆԵՐԻ ապառուհին	18
7.— ԲԺՇԿԱՊԵՏ ՍՄԻՐՆՈՎ.	65

Ա. եւ Բ. արարելերը տեղի ունին մի տարուան ընթացին,
իսկ Գ. եւ Դ. արարելերը երկրորդից մօս երկու տարի անց:
Գործողութեանց վայրն է ճախապատրազինեան շրջանի
կովկասեան զինաւոր բաղադրերից մեկը:



Ա. ԱՐԱՐ

Բեմը ներկայացնում է լճդունարան (սալոն) ասիսկան
և եւրոպական խառը կահաւորութեամբ: Գորգեր, քախ, քազ-
մոց (գիւտան), քազկարողներ, փորդիկ սկզբներ եւջն: Պատերից
կախուած են Գուրգենի հօր, պատի եւ տասի նկարները՝ շին
շշանակներով: Խորի պատից դուռ դեպի նախասենեակը: Այդ
դրան վրայ զանցի կոճակ, իսկ մօտը՝ հեռախօսի զործիք՝ փորդիկ
սկզբնի վրայ: Զախ պատից դուռ դեպի Գուրգենի առանձնա-
սենեակը: Դոների վրայ՝ քանար վարագոյններ:

Կես օրից յետոյ ժամը 3-ը:

ՏԵՍԻԼ 1.

ՇՈՒՇԱՆ ԵՒ ՍՈՆԱ

Վարագոյրը բացուելու պահին, Շուշանը սեւ զգեստով
նասած քազմոցի վրա՝ „բուղը և բանում”, իսկ Սօնան, շին
հագուստով նասած մօտի քազկարողին՝ թերը և կարդում:

ՍՕՆԱ. (Թերը ցած դնելով).— Զկշտացա՞ր քո „Փալ-
չիութիւնից”:

ՇՈՒՇԱՆ. (Խօսում է, շարունակելով իր խաղը).— Իմ
„Փալչիութիւն”ը քեզ ինչո՞վ է խանգարում:

ՍՕՆԱ. (Նայեղով խաղարդիերին).— Անչուշտ այս „Փա-
լչուն” էլ երազածդ թոռան մասին է:

ՇՈՒՇԱՆ. (Հառաջելով).— Ուրիշ ինչի մասին կա-
րող է լինել, երբ օջախս մարում է:

ՍՕՆԱ.— Ինչո՞ւ ես յուսահատում, մայրիկ, Աննի-
կը, փառք Աստուծոյ, դեռ չի ծերացել, որ չկարողանայ քեզ
մի թոռնիկ տալ:

ՇՈՒՇԱՆ.— Եօթը տարի չքեր մնացող կնոջից, միա-

մըսութիւն է զաւակ սպասել:

ՍՈՒՆԱ. — Նա համոզուած է, որ այս անգամ իր յոյշ սեղն ի գերեւ չեն ելնելու: Տեսնենք ի՞նչ լուր է բերում բժշկից:

ՇՈՒՇԱՆ. — Զոր ծառից պտուղ չի լինի . . . Զուր գրամեր է, որ ծախաւում է բժիշկների վրայ:

ՍՈՒՆԱ. — Ինձ թւում է, թէ դու աւելի՛ ես կարեւ լորութիւն տալիս այս խնդրին, քան ինքը Գուրգէնը:

ՇՈՒՇԱՆ. — Ծատ ես սխալում: Գուրգէնը գիշերցերեկ տառապում է այն մտքից, որ Մէլիք-Աղամեանների հինաւուրց տոհմը կարող է իրենով վերջանալ:

ՍՈՒՆԱ. — Ինչո՞ւ պէտք է վերջանայ: Ոչինչ էլ որ չլինի՝ մի որբ երեխայ կ'որդեգրենք եւ մեզ ժառանգը կը դարձնենք:

ՇՈՒՇԱՆ. — Դու փոխանակ այդ տեղերն ընկնելու՝ լաւ կ'անես, քարը փէշիցդ թափ տաս և ամուսնանաս, որ պէսզի ես էլ մի թոռնիկով ուրախանամ:

ՍՈՒՆԱ. (Ժպտարով). — Ո՞ւմ հետ ամուսնանամ:

ՇՈՒՇԱՆ. — Ա. թէկուզ Պ. Սերոբեանի հետ: Ի՞նչ պակաս տղայ է. շէնքով, շնորքով, ուսումով:

ՍՈՒՆԱ. (Ժպտարով). — Մի աւելի խելքը գլխին մարդ չգտա՞ր:

ՇՈՒՇԱՆ. — Պ. Սերոբեանը չլինի, թող Պ. Առլաննը լինի: Նրան հօ շատ ես հաւանում:

ՍՈՒՆԱ. (Ժպտարով). — Բաւական չէ, որ ես նրան հաւանեմ. պէտք է որ նա էլ ինձ հաւանի: Եւ յետոյ՝ հաւանելուց մինչեւ սիրելը, բաւական տարածութիւն կայ:

ՇՈՒՇԱՆ. (Զանձրոյրով). — Մինչեւ դու քո այդ տարածութիւնները կտրես-անցնես՝ իմը ինձ կը հասնի: (Խաղաղորեր մի կողմ նետելով) Զէ՛, տեսնում եմ, որ մեզ այլ ելք չէ մնալու քան այն, որ Գուրգէնը ապահարզան տայ Աննիկին և մի ուրիշի հետ ամուսնանայ:

ՍՈՒՆԱ. (Խոսրին). — Այդ բանը մտքիցդ հանի՛ր մայրիկ:

ՇՈՒՇԱՆ. — Ի՞նչո՞ւ:

ՍՈՒՆԱ. — Որպէհետեւ դա կանխամտածուած սպանութեան պէս մի բան կը լինի: Աննիկն այնպէ՛ս է սիրում ու պաշտում Գուրգէնին, որ առանց նրան մի օր իսկ չի ապլի:

ՇՈՒՇԱՆ. (Զանձրոյրի արտայայտութեամբ). — Դուք էլ ձեզ համար բան ու գործ էք գարձրել սէ՛ր, պաշտամո՞ւնք և էլ չգիտեմ թէ ինչ . . . (Եթուս և խորի դունով):

Սօնան պահ մի նայում է Շուշանի յետեւից եւ ապա վերակուու իր լիրեցանութիւնը:

ՏԵՍԻԼ. 2.

ՍՈՒՆԱ. ԵՒ ՍՆԿԻԿ

ԱՆՆԻԿ (Մտնում է ձախ դռնից, կիրակնօրեայ, բայց պարզ հագուստով). — Գուրգէնը գեռ չի՞ վերադարձել, Սօնա:

ՍՈՒՆԱ. — Ոչ: Ի՞նչ լուր բժշկից:

ԱՆՆԻԿ (Տիրութեամբ). — Սովորական պատրանքների կրկնութիւնը (Նսուտ է):

ՍՈՒՆԱ. (Ծիծաղով). — Տեսնում ես, սիրելիս, եթէ անցեալ տարի գու էլ, մայրիկի եւ Գուրգէնի հետ խօսքը մէկ արած, չստիպէիք ինձ այդ յիմար հիւանդանթեան պատճառով բժկական ֆակուլտէտը կիսատ ձգել՝ հիմա ես արդէն կատարեալ բժկուհի կը լինէի եւ թոյլ չէի տայ, որ ուրիշները քո պատրանքները քամուն տան:

ԱՆՆԻԿ. — Դու կատակի ես տալիս, Սօնա, բայց իմ որտից արիւն է գալիս:

ՍՈՒՆԱ. (Կարնկցական կցամբանիով). — Լա՛ւ, հերիք է դու էլ սիրոտ հատցնես: Այնպէս ես այդ խնդիրը քեզ համար իդէ-ֆիքս (ունեք քարձրել, որ կարծես աշխարհ հում առաջին եւ վերջին անդաւակ կինը դու որ կատ:

ԱՆՆԻԿ. — Իդէ-ֆիքս չեմ գարձրել, Սօնա: Իմ կեան քըն այնպէ՛ս է լեցուած Գուրգէնով, որ հարիւր տարի էլ այսպէս մնամ, ախ չեմ քաշի: Բայց նա այնքա՞ն տես չում է զաւակ ունենալու . . . Յետոյ՝ մայրիկն էլ . . .

ՍՈՒՆԱ. (Ծիծաղով). — Մայրիկն իրօք որ շատ թունք է կպել թոռնիկ ունենալու ցանկութեանը: Քիչ առաջ էլ

ինձ էր խորհուրդ տալիս ամուսնանալ Պ. Ասլանեանի եւ մինչև իսկ Պ. Սերոբեանի հետ, որպէսզի ինք թոռնիկ ունենայ:

ԱՆՆԻԿ (Տիուր ժպիտով).— Ինչ վերաբերում է Պ. Ասլանեանին՝ կարծեմ մայրիկը քո սրտիցն է ջուր խմում՝ նրա հետ ամուսնանալու առաջարկ անելով:

ՍՈՒՆ. (Ժպտաղով).— Ինչու ես այդպէս կարծում:

ԱՆՆԻԿ.— Որովհետեւ վերջին շաբաթներս նրա առունը բերնիցդ վար է ընկնում:

ՍՈՒՆ.— Իսկապէս, չես կարող երեւակայել, Աննիկ, թէ նա ինչքա՞ն գրաւիչ տղամարդ է: Նրա ամէն մի խօսքից ու շարժումից՝ նկարագրի աղջուութիւն եւ իմաստութիւն է ժայթքում: Իմ ծանօթ երիտասարդները, նրա համեմատութեամբ, այնքա՞ն սովորական և չնչին են երեւում:

ԱՆՆԻԿ (Ժպտաղով).— Մինչեւ անգամ Պ. Սերոբեա՞նը, որ շուքի պէս հետեւում է քեզ ամէն քայլափոխի:

ՍՈՒՆ.— Ի՞նչ համեմատութիւն: Նրա մօտ Պ. Սերոբեանը կատարեալ երախայ է, եւ այն էլ անզուսպ, չփացած երեխայ:

ԱՆՆԻԿ.— Դու չե՞ս գտնում, սակայն, որ Պ. Ասլանեանը մի քիչ անհամարձակ է եւ անվճուական:

ՍՈՒՆ.— Անհամարձակ' թերեւս. բայց բնա՛ւ անվընուական: Նրա ասած խօսքին կարող ես վստահիլ, ինչպէս անսասան ժայռի: Ինչ վերաբերում է անհամարձակութեանը՝ դա էլ հոգեկան նուրբ մշակոյթի արդիւնք է, ուրիշ ոչինչ:

ԱՆՆԻԿ.— Զգիտեմ, դոնէ մինչեւ Ռուսաստան գնաւը, նա այդպիսի տպաւորութիւն էր ձգում վրաս:

ՍՈՒՆ.— Այո՛, բայց մի՛ մոռացիր, որ այդ ժամանակից ի վեր ութը երկար ու ձիգ տարիներ են անցել եւ այն էլ խիստ բեղուն աշխատանքներով լիցուն տարիներ: Ռուսաստանում նրա յատակագծերով կառուցուած չէնքերին թիւ-համար չկայ:

ԱՆՆԻԿ.— Նրա գասախօսութիւնը մեր հին ճարտա-

րապետութեան մասին իրօ՞ք այնպէս հետաքրքրական էր, ինչպէս այսօրուան թերթերն են գրում:

ՍՈՒՆ. (Յափշակութեամբ).— Ի՞նչ ես ասում, — Աննիկ, մի կատարեալ շէ-դէօվը (chief ժօւսուր) . . . Ափսոս, որ դու չեկար:

ԱՆՆԻԿ.— Շատ էի ուզում գալ. բայց տեսայ, որ Գուրգէնը տրամադիր չէ, ես էլ հրաժարուեցի:

ՍՈՒՆ.— Ճիշդն ասած, ես չեմ հասկանում քո այդ մշտական համակերպութիւնը Գուրգէնի տրամադրութիւններին:

ԱՆՆԻԿ (Ժպտաղով).— Փորձի՛ր ամուսնանալ Պ. Ասլանեանի հետ՝ եւ կը հասկանաս:

ՍՈՒՆ.— Ոչ, ես չէի կարող կապուել մէկի հետ այն աստիճան, որ ստիպուէի նրա համար ուրանալ ինձ, ինչպէս դու ես անում: Քո սէրը սովորական գծից դուրս մի բան է:

ԱՆՆԻԿ.— Սէրը, եթէ անխպելի կապի եւ ինքնամուաց նուրիումի զգացում չէ, չարժէ որ կոչուի այդ անունով: Բայց դու այն ասա՛. ինչպէ՞ս էր պահում իրեն Պ. Սերոբեանը դասախոսութեան ժամանակ:

ՍՈՒՆ.— Ո՞ւհ, անտանելի՛, անտանելի՛ . . . Երեւակայի՛ր, սրան ամբողջ երկու րոպէ գդրում էր ծափահարութիւններից, իսկ նա ՚ի անգամ գոնէ ձեռքը ձեռքին չկացըցեց: Դասախոսութեան ընթացքին էլ, նրա հետնական ծամածութիւնները պէտք է տեսնէիր:

ԱՆՆԻԿ.— Երեւակայում եմ, թէ ի՞նչ պիտի լինի խեղճի վիճակը, երբ այսօր քեզ և Պ. Ասլանեանին միաւմին տեսնի հարեւորձականի ցերեկոյթին:

ՍՈՒՆ. (Ծխաղով).— Իրա՞ւ որ . . .

ԱՆՆԻԿ.— Դու ծիծաղում ես, Սօնա, բայց խոհեմութիւնը պահանջում է մի քիչ զգոյշ լինել նրա հետ:

ՍՈՒՆ.— Սակայն հօ չե՞մ կարող գերի դառնալ նրա յիմար խանդուութեանը: Գոնէ պատճառ ունենար խանդուելու: Պ. Ասլանեանն այնքա՞ն կորբեկտ է ինձ հետ, որ աւելի լինել չի կարելի: Իսկ նա կատաղութիւնից պայշ-

թում է, երբ ես երկու խօսք եմ փոխանակում այդ մարշուն հետ:

ՏԵՍԻԼ 3. ՆՐԱՆՔ ԵՒ ՇՈՒՇԱՆ

ՇՈՒՇԱՆ (Մտելով խորի դռնից՝ Աննիկին).— Դու արդէն վերադարձել ես: Ի՞նչ ասաց բժիշկը:

ԱՆՆԻԿ (Բնկուած).— Նորից հին պատմութիւնը:

ՇՈՒՇԱՆ.— Այդպէս էլ գիտէի: Իսկ դու ոչ լի օր ես հարցնում և ոչ կիրակի՝ բժիշկների չէմքը մաշելու համար:

ԱՆՆԻԿ.— Անցեալ անգամ նա այնպէս էր յուսաւորում, որ չկարողացայ համբերել մինչեւ վաղը:

ՇՈՒՇԱՆ (Հեղնանեով).— Եթէ չյուսադրի, ինչպէս պէտք է կարողանայ դրամներդ կորզել... (Աօնային) Իսկ Պ. Ասլանեան ինչ եղաւ:

ԱՅՆԱ.— Հիմա ուր որ է կը գայ:

ՇՈՒՇԱՆ.— Գուրգէնն էլ, չգիտեմ, ինչո՞ւ այսքան ուշացաւ: Վախենում եմ յանկարծ մոռանայ, որ հոգեւ հանգստին պիտի գնանք:

Զանգահարութիւն

ԱՅՆԱ (Ուրախ).— Աս Պ. Ասլանեանի զանգն է (Շատրվան ելնում է խորի դռնով):

ՇՈՒՇԱՆ (Ժամանակ).— Ինչպէս էլ նկատե՞լ է նըադանգահարութեան եղանակը:

ՏԵՍԻԼ 4. ՆՐԱՆՔ ԵՒ ՇՈՒՇԱՆ

ՇՈՒՇԱՆ (Խորի դրան շեմին).— Յարգանքներս: (Համբուրում է Շուշանի եւ Աննիկի ձեռիր):

ՇՈՒՇԱՆ.— Ասուած է՝ «անունը տուրը՝ սիոոցը բա՛ց»: Հէնց նոր ձեր մասին էինք խօսում: Նստեցէքր

ԽՆԴՐԵԱ:

ՇՈՒՇԱՆ.— Յուսով եմ, որ վատ չէիք խօսում իմ մասին:

ԱՅՆԱ (Ուրախ) Մեր տանը, բարեկամների բացակայութեանը այլ բան չեն խօսում, քան ներկայութեանը:

ՇՈՒՇԱՆ.— Տարակոյս չունիմ այդ մասին, օրիորդ, իմ ասածը կատակ էր: Պ. Գուրգէնը տա՞նը չէ:

ԱՆՆԻԿ.— Ոչ: (Նայելով ժամացոյցին) Զարմանալի է, թէ ինչո՞ւ ուշացաւ: Այս անձգապահութիւնը նրան նման չէ:

ՇՈՒՇԱՆ (Ժամանակ. Աննիկին).— Բատ երեսյթին Պ. Գուրգէնը ուսանող ժամանակի պէս բժախնդիր է ճշգապահութեան հարցում: Յիշո՞ւմ էք, թէ ինչպէս էիք վախենում ուշանալ այն ժողովներին, որոնց նա պիտի նաշագահէր:

ԱՆՆԻԿ.— Վախնալու բան չկար: Ես սոսկ աշակերտուհի, որին չնորհ էիք արել թոյլ տալու, որ յաճախէ ուսանողական հաւաքը թները՝ աշխատում էի հէնց սկզբից ներկայ լինել ժողովներին, որպէսզի մի բան հասկանացի ձեր վէճերից:

ԱՅՆԱ (Շահնինին).— Ինչի՞ մասին էիք վիճում:

ՇՈՒՇԱՆ.— Հազար ու մի մանը ու խոչոր հարցերի մասին: Յիշում եմ, մի անգամ վիճաբանութիւնը առանձնապէս տաքացաւ, որովհետեւ Պ. Գուրգէնը խիստ սուրձեւով արտայայտուեց մի ուսանողուհու դէմ, որ քննադատում էր ժամանակակից ընտանեկան կեանքի յետամիացութիւնները եւ, մասնաւորապէս, դատապարտում տղամարդու տիրապետող գերը ընտանիքում: Պ. Գուրգէնը այդ ժամանակները ընդհանըապէս աւանդապաշտ տրամադրութիւններ ունէր:

ՇՈՒՇԱՆ.— Հիմա էլ այդպէս է: Այս տեսակէտից Գուրգէնը իր հօր հետ մի խնձոր է՝ երկու կէս աբած: Ամէն մի աւանդական սովորութիւն և ծէս սըրութիւն էր հանգուցեալի համար:

ՇՈՒՇԱՆ.— Մի անգամ էլ, Պ. Գուրգէնի մի զեկու-

ցումը երկար ու բարակ վէճերի նիւթ դառաւ:
 ՍՕՆԱ. — Ինչի՞ մասին էր այդ զեկուցումը:
 ՇԱՀԻՆ. — Մալթուղականութեան մասին: Հակառակ
 Մալթուղի տեսութեան, որ պահանջում է զաւակների թիւ-
 ւը իւրաքանչիւր ընտանիքում սահմանափակել երկուսով,
 Պ. Գուրգէնը պնդում էր, թէ, մեր պայմաններում, ամէն
 մի ընտանիք առնուազն հինգ զաւակ պէտք է ունենայ:
 ՇՈՒԾԱՆ (Հառաջանիով). — Մէկով էլ գոհ ենք, թո՛ղ
 Աստուած տայ:

ԱՆՆԻԿ (Սօնային). — Դուք չէ՞ք ուշանայ ցերեկոյ-
 թին:

ՍՕՆԱ. (Նայելով թերի ժամացոյցին). — Ոչ, մի քանի
 ըստէ էլ կարող ենք մնալ: (Շահնիկին) Իսկ դուք եղբօրս
 հետ վիճաքանութիւններ չէ՞ք ունեցել:

ՇԱՀԻՆ. — Ինչպէս չէ: Մեր ուսանողութեան վերջին
 տարին, մի անգամ ոսոյնիսկ թունէ վէճի բոնուեցինք՝
 ինչ որ բանաձեւերի շուրջը: (Աննիկին) Այդ ժամանակ,
 յիշո՞ւմ էք, դուք թէեւ նոր էիք արձանագրուել կանանց
 բարձրագոյն կուրսերում, եռանդուն պրոպագանդ էիք
 մղում հին ուսանողուհիների մէջ, որպէսզի Պ. Գուրգէնի
 բանաձեւին քուէ տային և ոչ թէ իմ բանաձեւին:

ԱՆՆԻԿ. — Ինչպէս էլ պահե՞ւ էք ձեր մտքի մէջ այս
 վէճերը: (Կատախով) Հիմա հասկանալի է, թէ ինչո՞ւ այս
 քա՞ն տարիների ընթացքին, մի երկտող իսկ չգրեցիք ո՛չ
 ինձ և ո՛չ էլ Գուրգէնին: Բայց, կատակը մի կողմ, ինչ
 պէ՞ս եղաւ, որ դուք յանկարծ որոշեցիք մեր կողմէրը
 չուել Ռուսաստանից:

ՇԱՀԻՆ (Թախիմով) Զգիտեմ . . . Պարագաներն այն-
 պէս բերին, որ ստիպուեցի գալ . . .

ՍՕՆԱ. (Կատախով). — Եթէ շատ էք դժոն ձեր դա-
 լուց կարող էք նորից վերադառնալ:
 ՇՈՒԾԱՆ (Կյատարանիով). — Ինչե՞ր ես ասում, Սօ-

ԿԱՀԻՆ (Շուշանին). — Օրիորդն այդպէս է խօսում,
 որովհետեւ չգիտէ, որ ինձ համար, հիմա այստեղից վե-

րադառնալն աւելի շժուար է, քան այստեղ գալը: (Արա-
 գօրէն բանձալի ակնարկ է նետում Աննիկի վրայ եւ դարձնուտ
 դեմքը):

ՍՕՆԱ. (Նայելով թերի ժամացոյցին եւ ոսի եղելով). —
 Օ՛, Պ. Ասլանեան, այլիւս ըսպէ չունենք կորսնցնելու:

ՇԱՀԻՆ. — Չեր տրամադրութեան տակ եմ, օրիորդ
 (Ոսի և եկառմ):

ՍՕՆԱ. — Սպասեցէք մի վայրկեան, գլխարկս դնեմ
 (Եկառմ և խորի դունով):

ՇԱՀԻՆ (Աննիկին). — Իսկ դու՞ք ինչու չէք գալիս
 այս ցերեկոյթին:

ԱՆՆԻԿ (Ոսի կանգնելով). — Եթէ Գուրգէնն ազատ
 լինէք՝ կը գայլինք միասին: Բայց նա մայրիկի հետ պէտք
 է հիմա գնայ Կարապետեանի հոգեհանգստին:

ՇՈՒԾԱՆ (Աննիկին). — Սակայն դու ի՞նչ ես անելու
 տանը մեն-մենակ:

ԱՆՆԻԿ. — Մտադիր եմ եղբօրս նամակին պատաս-
 խանել:

ՇՈՒԾԱՆ. — Իսկապէս ցաւալի է, որ այս հոգեհան-
 գիստը զուգագիպեց Բարեգործականի ցերեկոյթին: (Սօնա-
 յին, որ երեւում է զիստրկով խորի դրան շեմին) Սօնա, չմո-
 ռանաս իմացնել վարչութեան անդամներին մեր բացա-
 կայութեան պատճառը: Դուք էլ, Պ. Ասլանեան, եթէ երե-
 կոյեան ազատ էք, համեցէք մեզ հետ ընթրիքի:

ՇԱՀԻՆ. — Հաճոյքով, տիկին:

ՍՕՆԱ. — Ուրեմն, շարժուենք:

ՇԱՀԻՆ. — Ցտեսութիւն, յարգելի տիկիններ:

ՇՈՒԾԱՆ եի ԱՆՆԻԿ. — Ցտեսութիւն:

Սօնան եւ Շահնի, եկառմ են խորի դունով:

ՇՈՒԾԱՆ (Աննիկին). — Գուրգէնի ու փողկապը
 դասա՞բ:

ԱՆՆԻԿ. — Ոչ:

ՇՈՒԾԱՆ. — Մեծ պահարանի դարակները տես: Կա-
 րող է նըանց մէջ լինել:

ԱՆՆԻԿ. — Բայց նըանց մէջ փողկապն ի՞նչ դործ

ունի (Եղնում և ձախ դռնով):

ՇՈՒԾԱՆ (Խնճ իրեն).— Անդին հարս է, օրինակեւ
մի կի՞ն . . . Բայց ի՞նչ հողը տամ գլխիս, որ իր ու բախ-
տից, կրակի մէջ է ձգել այս տունը . . .

Տ Ե Ս Ի Լ 5.

ՇՈՒԾԱՆ ԵՒ ԳՈՒՐԳԻՆ

ՇՈՒԾԱՆ (Գուրգենին, որ մտնում է խորի դռնից).—
Վերջապէ՞ս . . .

ԳՈՒՐԳԻՆ.— Շատ ուշացայ հա՞:

ՇՈՒԾԱՆ.— Ուշանալն էլ խօ՞սք է:
ԳՈՒՐԳԻՆ.— Պ. Գրիգորեանի մօտից վերադառնա-
վս, մի վայրկեանով մտայ գծագրիչ Գալստեանի մօտ՝
մեր նոր պղնձահանքի յատակագիծը ստանալու համար:
Բայց նա այնպիսի մի սիւրպրիզ արաւ ինձ, որ կարող
էի ժամերով մօտը մնալ: (Նայելով շուրջը) Ո՞ւր են Աննի-
կը, Սօնան:

ՇՈՒԾԱՆ.— Աննիկը ներսն է, իսկ Սօնան, Պ. Աս-
լանեանի հետ միասին, քիչ առաջ գնաց ցերեկոյթին: Ի՞նչ
սիւրպրիզի մասին է խօսք:

ԳՈՒՐԳԻՆ.— Պ. Գալստեանը, համաձայն տուածս
տեղեկութիւնների, գծագրել է մեր տոհմական ծառը:
(Նաև Շուշանի մօտ եւ բանալով ձեռի մեծ թերթը) Մայ-
րիկ ջան, տե՛ս, ահա այստեղից է սկսում իմ ծանօթու-
թիւնը մեր տոհմի սկզբնաւորութեան մասին: Տասնեւլե-
ցերորդ դարու վերջերին, Շահ Աբրասը, իմ պապերից մէ-
կին, որ Հայրում էր կոչում, մէկիքութեան տիտղոս է
տալիս: Նրա որդուց, մէկիք-Ղահրամանից, ինչպէս տես-
նում ես, երեք ճիւղաւորութիւն է ստացւում: Մէկը գնում
է Հնդկաստան եւ անհետ կորչում: Միւսի հետքերը, ասում
են, մինչեւ օրս կան նոր Զուլայում եւ Սպահանում:
Բայց ինչքան փնտուել տուի՝ չկարողացայ գտնելի Մենք
ահա այս մէկիք Ղահրամանի անդրանիկ որդուց, մէկիք
Աղամից ենք սերում: Տե՛ս, այստեղից սկսած, տոհմը շա-

բունակւում է կանոնաւոր յաջորդականութեամբ, մինչեւ
քո խոնարհ ծառան:

ՇՈՒԾԱՆ (Հառաջելով).— Եւ քեզնով էլ չորանում է
քո տոհմական ծառը . . .

ԳՈՒՐԳԻՆ (Տիւրոքամբ).— Այո՛, ի՞նչ աբած . . .

ՇՈՒԾԱՆ.— Մեզ էլ, երեւի, նոյն ձակատագիրն է
սպասում, ինչ որ վիճակուեց հանգուցեալ կարապետ ա-
ղային:

ԳՈՒՐԳԻՆ.— Ի՞նչ ձակատագիր:

ՇՈՒԾԱՆ.— Այն՝ որ նրա հարստութիւնը, հիմա
շան ու գէլի բաժին պիտի դառնայ: Քանի՛ քանի՛ անգամ
ընկեր-բարեկամներ խորհուրդ տուին նրան ամուսնալուծ-
ուել՝ մի ժառանգ ունենալու համար: Իսկ նա, չգիտեմ
ի՞նչ էր գտել իր կնոջ մէջ, մինչեւ վերջը նրան կազած
մնաց և այսօր մէկը չունի, որ տէր կանգնի այդ ահագին
կարողութեանը:

ԳՈՒՐԳԻՆ.— Կարողութիւնը՝ քարը գլուխը: Աս-
կայն, վաստ չէր լինի, որ Սօնան ամուսնանար, որպէսզի
մեր տոհմը գոնէ աղջկայ գծով շարունակուէր, եթէ Ան-
նիկն, այսպէս, մինչեւ վերջն անգաւակ մնար:

ՇՈՒԾԱՆ.— Տոհմի շարունակութեան համար ի՞նչ
նշանակութիւն կարող է ունենալ Սօնայի ամուսնութիւ-
նը: Աղջիկը իր ամուսնու ընտանիքը կը պայծառացնի:
Եթէ չես ցանկանում, որ Մէլիք-Աղամեան աղդանունը
անհետանայ, ինքդ պէտք է մտածես այդ մասին:

ԳՈՒՐԳԻՆ.— Ի՞նչ մտածեմ:

ՇՈՒԾԱՆ.— Այն՝ ինչ որ խորհուրդ էին տալիս հան-
գուցեալ կարապետ աղային:

ԳՈՒՐԳԻՆ (Ծիծաղով).— Ուզում ես ասել, որ ես Աննիկից բա-
ժանուե՞մ:

ՇՈՒԾԱՆ.— Ինչո՞ւ չէ:

ԳՈՒՐԳԻՆ (Ծիծաղով).— Իսկ Աննիկի՞ն ինչ անենք:

ՇՈՒԾԱՆ.— Աննիկի մասին գու անհող կաց: Նա
գեռ այնքան երիտասարդ է եւ զեղեցիկ, որ ոչ մի զժուա-
բութիւն չի ունենայ իրեն համապատասխան մի ամուսին

գտնելու:

ԳՈՒՐԳԻՆ (Կրիս Տօմով).— Եւ դու կարծում ես, թէ ես բաց աչքով կարող եմ հանդուրժել, որ Աննիկը մի ուշից մարդու պատկանի՞:

Տ Ե Ս Ի Լ 6.

ՆՐԱՆՔ ԵՒ ԱՆԻԿ

ԱՆՆԻԿ (Մտնում է ձախ դռնից, մի սեւ փողկապ ձեռքիմ).— Դու արդէն այսուե՞ղ ես, ինչու իմաց չտուիր, որ եկել ես:

ԳՈՒՐԳԻՆ.— Քիչ առաջ եկայ:

ԱՆՆԻԿ.— Կարողացա՞ր համաձայնութեան գալ Պ. Գրիգորեանի հետ՝ մեր նոր պղնձահանքը շահագործելու մասին:

ԳՈՒՐԳԻՆ.— Ո՞րտեղից Նա արդէն որոշել է հաշուեարդարի ենթարկել իր հօր առեւրական գործերը եւ արտասահման անցնել:

ՇՈՒՇԱՆ (Զարմացած).— Ինչպէս թէ:

ԳՈՒՐԳԻՆ.— Հապա՞՝ Այդպէս է մեր բանը: Անգայաւում,

առեւրական եւ արդիւնագործական տները յաճախ հարիւրաւոր տարիներով պահում են իրենց գոյութիւնը՝ որդուց-որդի շարունակուելով: Իսկ մեր մէջ այդպիսի մի տուն չտեսայ՝ որ երեք սերունդ յարատեւած լինի: Այդ նրանից է, որ ընտանեկան աւանդութիւնն ասած բանը չկայ մեզ մօտ:

ՇՈՒՇԱՆ (Տիտուր եւ Աւախոն).— Ընտանեկան աւանդութիւնները տեւականացնելու համար, պէտք է նախ եւ առաջ ընտանիքը տեւականացնել:

ԱՆՆԻԿ (Գուրգենին).— Երեկոյեան ազա՞տ ես:

ԳՈՒՐԳԻՆ.— Այո՛, ի՞նչ կայ որ:

ԱՆՆԻԿ.— Կ'ուզէի փոքր ինչ դուրս ելնել քեզ հետո:

Շաբաթը մի կիրակի ունենք, այն էլ երեսդ չեմ տեսնում:

ԳՈՒՐԳԻՆ.— Շատ բարի: Երեկոյեան գնանք ակումբ ընթրելու: Այսօր այստեղ սիմֆոնիկ նուազահանդէս է լիւ

ՆԵՐՈՒ:

ՇՈՒՇԱՆ.— Բայց երեկոյեան Պ. Առլանեանը հրաւիրուած է մեզ մօտ ընթրիքի:

ԳՈՒՐԳԻՆ.— Որ այդպէս է, ասանը կ'ընթրենք եւ ամէնքս միասին կը գնանք նուազահանդէսին:

ՇՈՒՇԱՆ.— Դէ ես գնամ պատրաստւեմ: (Եղուս և խորի դոնով):

ԱՆՆԻԿ.— Բե՛ր այս փողկապը կապեմ: Քոնը հոգեհանդսաւին անյարմաք է: (Կապելով փողկապը և մեջօրէն) Իսկ դու գիտե՞ս, որ այսօր ինձ բնաւ չես համբուրել:

ԳՈՒՐԳԻՆ.— Իսկապէ՞ս . . . Այդ անպիտան Դրիշգորեանի լսադիրը այնպէս էր բռնել ուղեղու, որ մոռացայ համբուրել իմ լա՞ւ, լա՞ւ Աննիկին (Համբոյր):

ԱՆՆԻԿ.— Գուրգէն ջան, գիտե՞ս ինչ: Խնդրում եմ, այնպէս արա, որ ընթրիքից յետոյ մենք առանձին լինենք: ԳՈՒՐԳԻՆ.— Ինչո՞ւ:

ԱՆՆԻԿ.— Նախ՝ ուզում եմ իմ զբօսանքի ժամերին մենակ լինել քեզ հետ, եւ ապա՝ լաւ է, որ չխանգարենք Սօնային: (Ժպտազով) Սօնան շատ է հաւանում Պ. Առլանեանին: Ո՞վ գիտէ, գուցէ մի լուրջ բան է գուրս գալիս նրանց բարեկամութիւնից:

ԳՈՒՐԳԻՆ.— Ինչպէս կ'ուզես, սիրելիս (Շոյում և Աննիկի մազերը):

ՇՈՒՇԱՆ (Խորի դրան շկսին).— Դէ, շաբաթուենք, գուրգէն:

ԳՈՒՐԳԻՆ.— Ես պատրաստ եմ:

ՇՈՒՇԱՆ.— Աննիկ, ընթրիքի հոգը քեզ վրայ պիտի միայ:

ԱՆՆԻԿ.— Դու անհոգ կաց, մայրիկ: Ես կ'անեմ ինչ հարկն է:

Շոյանը եւ Գուրգենը ելնում են խորի դոնով: Աննիկը նրանց ուղեկցում եւ ապա, վերադառնարով բեմ՝ պահ մի մածում եւ ապա նեռախօսում:

ԱՆՆԻԿ (Հեռախօսում է).— Ալո՞ . . . Կենտրոնն է . . . Տուէք, խնդրեմ, 204 թիւր . . . Ալո՞ . . . Պրոդրեսում



խանութն է . . . Նշանակեցէք ինդրեմ . հետեւեալ պատուէնսը Մէլիք-Աղամեանների տնից . . . (Սպառում է) Ալօ՛, պատրաստ էք . . . Գրեցէք ուրեմն. 2 լաւ տապաշկած հաւ, 4 ֆունտ խաչած ասետրինա (ձուկ) եթէ թարմ է . . . 1 ֆունտ ապուխտ, 1 տուփ խաւեար . . . ոչ, միջակ մեծութեան. 2 տուփ սարդին, 1½ ֆունտ զուլցերիական պանիր . . . Այո՛, զուլցերիական . . . գրեցի՞ք . . . 5 ֆունտ երեւանի ղեղձ, 5 ֆունտ Գանձակի խաղող . . . Գրեցի՞ք . . . Այսքան . . . Խմբէքեղէնի կարիք չունինք . . . Մեր սպասուհին տանը չէ այսօր, պէտք է ձեր ծառայողի միջոցով ղրէք . . . Ե՞րբ. ոչ ուշ քան մինչեւ ժամը 7-ը: Շատ բարին:

Հեռախօսը փակում է եւ նստելով այն սեղանի առաջ, որի վրայ Շուշանը բուլք էր բանում ակում և գրել: Բիշ անց՝ զանգահարութիւն:

Աննիկ.— Ո՞վ պէտք է մինի (Եղնում է խորի դռնով ու խօսում նախասենեակում).— Պ. Շահէն . . . Այսպէս շուտ վերջացաւ ձեր ցերեկոյթը:

ՏԵՍԻԼ 8. ԱՆԴԻՆ ԵՒ ՇԱՀԷՆ

ՇԱՀԷՆ (Խորի դռնով բեւ և մտնում Աննիկի հետ միասին).— Ոչ, չվերջացաւ, բայց ես չկարողացայ մնալ: Աննիկ.— Իսկ օրինօրդը:

ՇԱՀԷՆ.— Նա այնտեղ է, Պ. Սերոբեանի հետ:

Աննիկ.— Հապա դուք ինչու չմնացիք: (Շահնինը լուս է) Ի՞նչ է պատահել, Պ. Շահէն, ինչու այդպէս գունատէք: Նստեցէք ինդրեմ:

ՇԱՀԷՆ.— Տիկին Աննիկ . . . Ես այլեւս չեմ կարող տանել այս . . . այս վիճակը:

Աննիկ (Շուարած).— Ի՞նչ վիճակ:

ՇԱՀԷՆ.— Մի՞թէ դուք չէք հասկանում, տիկին Աննիկ, մի՞թէ դուք չէք զուռմ, թէ ի՞նչ հրդեհ է լավում:

Միլոս . . .

Աննիկ (Շվիրուած).— Բայց . . . (Բնազդորեն նայում է շուրջը):

ՇԱՀԷՆ.— Մի վախենաք, մեզ ոչ ոք չէ լսում . . . Թոյլ տուէք, երկա՞լ տարիներից յետոյ, մի անդամ եւս բանալ սիրոս ձեր առաջ . . . Զգացմունքների այս յորդումը վեր է իմ ուժերից . . . (Ճակատը ավելոր մեջ առնելով) Ա՞լս այս ի՞նչ ճակատագիր է, ի՞նչ դառն ճակատագիր . . .

Աննիկ.— Պ. Շահէն . . .

ՇԱՀԷՆ (Բնիհատեղով).— Տիկ. Աննիկ, ես ամբողջ ութը տարի լուս ու մունջ կըել եմ անպատասխան մնացած սիրոյ տառապանքը: Ես ինձ թոյլ չեմ տուել մինչեւ իսկ մի անմեղ բացիկով յիշեցնել ձեղ իմ գոյութիւնը: Եւ յանկարծ այսպէս . . . Ո՞ր չար ոգին մղեց ինձ դէպի այս քաղաքը . . .

Աննիկ (Կարեկցարաւ).— Բայց, Պ. Շահէն, դուք այնպէս խաղաղ էիք այս ամբողջ ժամանակը: Ինձ թուում էք, մինչեւ անդամ, թէ մի նոր զգացմունք սկսել է ծայր տալ ձեր սրտում:

ՇԱՀԷՆ (Բնիհատած).— Դուք օր. Սօնային էք ակնարկում, անշուշտ: Խեղճ աղջիկ . . . Որքա՞ն անարդար եմ նրա հանդէպ . . .

Աննիկ.— Ի՞նչո՞վ էք անարդար:

ՇԱՀԷՆ.— Ես գիտեմ, որ իմ սիրալիք վերաբեր մունքը այլ մեկնութիւն կարող է առաջացնել նրա մէջ: Բայց ոչինչ չեմ անուում նրան թիւրիմացութեան մէջ չձըգելու համար, որպէսզի . . . որպէսզի անարդել կարողանամ տեսնել ձեղ, լսել ձեր ձայնը, վայելել ձեր մերձաւութիւնը...

Աննիկ (Խորի).— Պ. Շահէն:

ՇԱՀԷՆ.— Մի՞ բարկանաք, տիկ. Աննիկ . . . Եթէ դուք իմանայիք թէ ի՞նչ կատաղի պայքար եմ մղել ինքս իմ դէմ, իմ խեղճ սրտի դէմ, մինչեւ այստեղ գալի . . . Հաղին էինք մտել ցերեկոյթի սրահը, որ հոգիս մի անորաւ-

կելի տագնապի մատնուեց։ Այն միտքը, որ դուք այս ժամին մենակ էք և ես հազուագիւտ պատեհութիւն ունեմ նետուելու ձեր առաջ, զնելու սիրտս ձեր ոտքերի տակ... (Տեսնեղով դժոնուրենան արտայայտուրին Աննիլի դեմքին) Ա՛յս, մի՛ բարկանաք, մի՛ բարկանաք ինձ վրայ...

ԱՆՆԻԼԻ (Պայօրեկն).— Չեմ բարկանում. բայց շատ եմ ափսոսում, որ ձեր այս արտայայտութիւնները պլոտի զրկեն ինձ մի բարեկամութիւնից, որ ես թանկ եմ գնահատում։

ՇԱՀԵՆ (Խորտակուած).— Իմ գատավձիոն արտասահուած է...

ԱՆՆԻԼ (Հետզիւեկ ջերմանապով).— Խնդրում եմ, որ խալ մի՛ հասկանաք ինձ; Ես ձեզ չեմ մեղադրում, Եւ կարելի՞ է մէկին մեղադրել, թէ ինչո՞ւ է սիրում; Բայց ինչպէս ութը տարի սրանից առաջ, նոյնակէս եւ հիմա, ես՝ ձեր աղնիւ նկարագրին արժանի շիտակութեամբ՝ պէտք է առնեմ, որ չեմ կարող պատասխանել ձեր զգացմունքներին։ Դուք գիտէք, որ ես անվերապահօրէն պատկանում եմ Գուրգէնին։ Սիրում էի նրան, երբ դուք դեռ չէիք արտայայտել ձեր զգացմունքները դէպէի ինձ, իսկ այժմ, նրա հետ կապուելուց յետոյ, առաւել' եւս։ Իմ հոգին ճեղքուածք տանել չի կարող, Պ. Շահէն։ Ինձ համար արդէն իսկ ծանր տանջանք է, որ ես, Գուրգէնի հոգեկան անդորրութիւնը չխանդարելու համար, չեմ կարող նրան յայտնել մեր այս տեսակցութիւնն ու խօսակցութիւնը։ Բայց դուք էլ պէտք է նկատի ունենաք, որ սրանց կրկնութիւնը...

ՇԱՀԵՆ (Երեւուն բայիերով շարժուա և դիպի յուրի դուռը).— Մնաք բարեւ, աիկ. Աննիլի, ներեցէ՛ք ինձ։

ԱՆՆԻԼ (Զերմօրեկն).— Ոչ, մի՛ հետանաք այդպէս։ Ես ուզում եմ, որ մենք բարեկամներ մնանք. լա՛ւ, անկե՛զ զծ բարեկամներ... Յիշո՞ւմ էք մեր վերջին տեսակցութիւնը՝ իմ նշանադրութեան նախօրեակին։ Դուք խոստացաք, որ միշտ անձնուէք բարեկամն պլատի մնաք ինձ համար։ Հաւատացէ՛ք, որ ես ձեր բարեկամութիւնը հիմա նուազ չեմ գնահատում, քան այն ժամանակ։ Նկատեցէ՛ք ինձ իրեւ.

ՃԵՐ քոյքը, որ չի կարող սիրել ձեզ կնոջական զգացմունքը ներով լոկ այն պատճառով, որ ՃԵՐ հարազատն է, ձեր արիւնակիցը... Մենք էլի առաջուան պէս բարեկամներ կը մնանք, այնպէս չէ։

ՇԱՀԵՆ (Ընկնածուած).— Բայց ես, իմ այսօրուան վարժունքից յետոյ, այլեւս ի՞նչ երեսով կարող եմ երևալ այս տանը...

ԱՆՆԻԼ (Իսպառ հանեցէք ՃԵՐ յիշողութիւնից մեր այս տեսակցութիւնը։ Ես ևս չեղեալ կը նկատեմ այն, եւ մեր յարաքերութիւնները կը մնան նոյնը, ինչ որ էին մինչեւ օրս Եւ յետոյ... (Յիշելու միզով) Ի՞նչ էի ուզում ասել... Այո՛։ Եթէ դուք իրապէս չէք կարող պատասխանել օր. Սօնայի զգացմունքներին՝ պէտք է այնպէս անէք, որ խեղճ աղջիկը զուը յոյսերով չտարուի։ Սօնան, ազգական լինելուց աւելի, իմ մտերիմ ընկերունին է։ Նա շատ աղջիկ է և շատ նուրբ հոգու տէր։ Յուսախարութիւնը կարող է ծանր աղջել նրա վրայ։ Ճեր այժմեան ընթացքից ես լաւ հետեւանքներ չեմ դուշակում Սօնայի համար եւ ոչ էլ ձեզ համար։

ՇԱՀԵՆ (Մասձիոյ).— Իրաւունք ունիք... Իրաւունք ունիք աւելի՛ եւս ծանր խօսքերով կշամամբելու իմ անթոյլատրելի վարմունքը նրա հանդէպ... (Ընկնածուած) Բայց դա նշանակում է փակել իմ առաջ այս տան դռները եւ զրկել ինձ գոնէ երբեմն-երբեմն ձեզ տեսնելու հնարաւորութիւնից... .

ԱՆՆԻԼ (Զերմօր).— Չեմ անգիտանում, որ դուք այլեւս առաջուան պէս յաճախ չէք կարող մեզ ացցելել։ Բայց երբեմն-երբեմն— ինչո՞ւ չէ։

ՇԱՀԵՆ (Կարմ յուրինից յետոյ).— Լա՛ւ, թող այդպէս լինի... (Համբուրուս և Սննիլի ձեռիլ եւ շարժուա դիպի յուրի դուռը):

ԱՆՆԻԼ (Ցանկը ելնում է յուրի դուռի։ Աննիլը ուղեկցում է նրան մինչեւ յուրոյ եւ ապա վերադանով իր տեղը՝ պահ մի մեռմ է մտախոն։ Յետոյ, վերցնում է գրիը եւ ակում գրել։

Բ. ԾՐԸՐ

Բեր ներկայացնում է սեղանատում՝ համապատասխան կահաւորութեամբ.— հայելիներով բիւֆե, ճաշի սեղան, որի վրա կախուած է մեծ ջան՝ լուսալիովով, կաշեծածկ արուներ եւայլն: Նախարեսի կողմը մի գեղեցիկ քախս՝ ծածկուած զորդով եւ բարձրով, իորին պատից դուռ դեպի նախասենեսի, իու ձախ պատից դուռ դեպի լեզունարան: Իորին դրան աջ կողմը՝ հեռախոս:

Երեկոյնան ժամը 8-ը։

ՏԵՍԻԼ 1. Բ. ԾՐԸՐ. ՊԵ. Ա. Ն. Ն. Ի.

Վարագոյրը բացուելու պահին, բէմը դատարկ է: Աննիկը շտապով մտնում է խորի դուից եւ, բիւֆեի դարակից դրաներ հանելով՝ դնում մի նամակածրարի մէջ: Յետոյ՝ նամակածրարը բողեղով բիւֆեի վրայ՝ դիմում է դեպի խորի դուռը եւ այնուհետ հօսում դեպի դուր:

Աննիկ. — Այս կողմը համեցէ՞ք, Պ. բժշկապետ: (Բժշկապետին, որ ձեռքերը տրուելով մտնում է ներս) Նորոգութեան պատճառով, մեր ընդունաբանն այսօր անկարգ վիճակի մէջ է:

Բժշկապետ. — Ոչի՞նչ . . . Այստեղ եւս կարող ենք լոսիւ (Նստում է):

Աննիկ (Նստելով). — Դուք ձեր բոլոր քննութիւնն աւարտած էք նկատում, Պ. բժշկապետ:

Բժշկապետ. — Եւ ի՞նչ է ձեր վերջնական եղբակացութիւնը:

Բժշկապետ (Ծանրօրին). — Եղբակացութիւնս այն է, որ ձեր օրգանիզմը միանգամայն բնականոն վիճակի մէջ էր և դուք օրգանական ո՛չ մի պատճառ չունէք չբեր միալու: Աննիկ. — Բայց ինչի՞ցն է, որ զաւակ չի լինում:

Բժշկապետ. — Տրուած լինելով, որ ձեր ամուսնական կեանքը, ինչպէս ասացիք, բնականոն ընթացք ունի՝ պէտք է հետևցնել, որ ձեր չբերութեան պատճառը ձեր ամուսինն է:

Աննիկ (Զարմացած). — Ինչպէ՞ս թէ:

Բժշկապետ. — Պատահում է, որ տղամարդը, իր առնական կարողութիւնները երևոյթապէս լըլու չափով պահելով հանդերձ՝ չի կարող զաւակ տալ կնոջը, որովհետեւ ինչ-ինչ պատճառներով, ամուս է դաւակ արտադրելու համար:

Աննիկ. — Սարսափելի է . . .

Բժշկապետ. — Սարսափելի ոչի՞նչ չկայ, տիկին, այդպահի դէպքերը յաճախ են պատահում բժշկական պրակտիկայի (պրաքսիսի) մէջ:

Աննիկ (Մրմջաղով). — Կը նշանակէ, թէ այնքան տարիներ գարմանուելս ի զուր է եղել . . .

Բժշկապետ (Ժպտարով). — Եյո՛, եթէ չհաշուենք այն օգուտները, որ ստացել են զբանից բժշկներն ու դեղաբանները:

Աննիկ. — Բայց չի՞ կարելի, արդեօք, գարմանել ամուսնուս ամուսինուս ամուսինութիւնը:

Բժշկապետ. — Եթէ նա քիչ առաջ թուածս հիւանդութիւններից կամ օրգանական թերութիւններից մէկն ու մէկը ունենար՝ կարելի էր մտածել այդ մասին: Քանի որ ձեր ամուսինը դրանցից ոչ մէկը չունի, ես, յենուելով իմ երկարամեայ փորձառութեան վրայ, համոզուած եմ, որ նա անբուժելիորէն ամուս է: Սակայն, դուք կարող էք, եթէ ուզում էք, ստուգել իմ այս վերջին եղբակացութիւնը:

Աննիկ. — Ինչպէ՞ս

Բժշկապետ. — Բժշկական քննութեան ենթարկել

առալով ձեր ամուսնուն:

Աննիկ.— Օ՛, այդ անկարելի է: Եթէ նա իմանայ, որ ինքն ամուլ է, անսահման դժբախտ կը զգայ իրեն: Նա այնպէ՞ս է տենչում զաւակ ունենալու . . .

ԲԺՇԿԱՂԵՑ (Ոսի եղելով եւ ժպտալով).— Այդ արդէն գուրս է իմ մասնագիտութիւնից . . . (Զեոյր տալով Աննիկին): Ուրեմն, մնաք բարե, յարգելի՝ տիկին:

Աննիկ.— Բարի ճանապարհ, Պ. բժշկապետ: Այնչափ երախտագէտ եմ ձեր ուշադիր վերաբերմունքի համար: Այս էլ . . . (Վերջում է բիւֆհի վրայի նամակածրարը եւ տալիս րժշկապետին):

ԲԺՇԿԱՂԵՑ.— Ծնորհակալութիւն: (Նաևակածրարը դնում է ծոցը եւ եղնում խորի դունով):

Աննիկը ուղեկցում է բժշկապետին մինչեւ դուռը եւ ապա վերադասարդ րեմ՝ նստու բախտի վրայ: Նրա շարժուձեւից երեւում է, որ ծանր մտածութիւն միջ է:

ՏԵՍԻԼ. 2.

Ա. Ն. Խ. Ե. Վ. Գ. ՈՒ Ր Գ. Է.

ԳՈՒՐԳԻԿԻՆ.— Բժշկապետը գնա՞ց արդէն: Աննիկ (Տիւրուքևար):— Այո՛:

ԳՈՒՐԳԻԿԻՆ.— Տխուր ես երեւում: Ի՞նչ ասաց:

Աննիկ (Շփորուած).— Մի առանձին բան չասաց:

ԳՈՒՐԳԻԿԻՆ.— Իսկ նրա մասին խօսում են, թէ ամեւ նապաջնակարգ մասնագէտներից մէկն է կանանց հիւանդութիւնների համար:

Աննիկ.— Անչուշտ մեծ մասնագէտ պէտք է լինի, որ անհրաժեշտ են նկատել նրան Մուկուայից այստեղ բեւ տալ՝ կանանց բուժաբանը կազմակերպելու համար: Բայց նա էլ այն կարծիքին է, որ պէտք է շարունակեմ դարձանուել:

ԳՈՒՐԳԻԿԻՆ.— Մինչեւ ե՞րբ:

Աննիկ (Նեարդայնութեամբ).— Ես ի՞նչ իմանամ մինչեւ երբ . . . (Լուրիւմ) Դու շա՞տ ես անհամբեր:

ԳՈՒՐԳԻԿԻՆ.— Ի՞նչ թագցնեմ մեղքս, Աննիկ, քանի

տարիներն անցնում են, այնքան էլ անհանգստութիւնս աւելանում է: Շարունակ զգում եմ ինձ մի մարդու գերում, որ դաւաճանում է իր նուիրական պարտականութիւններին:

Աննիկ.— Պարտականութիւն: Ո՞ւմ հանդէպ:

ԳՈՒՐԳԻԿԻՆ.— Իմ պապերի հանդէպ: Նրանք թողել են իրենց փառաւոր անունը, թողել են ահագին կալուածներ, որոնցով կարելի է սերունդների կեանք ապահովել, իսկ ես մէկը չունեմ, որ ինձանից յետոյ, տէր կանգնի այս ամէնին:

Աննիկ.— Բայց դու ինչո՞ւ ես հակառակում, որ

մենք մի երեխայ որդեգրենք և մեր ժառանգը զարձնենք:

ԳՈՒՐԳԻԿԻՆ.— Ի՞նչ եմ անում օտար երեխան: Օտար երեխան միայն ձեւական ժառանգի պայմանը կարող է լրացնել՝ և այն էլ առանց տոհմական շառաւիղի վարկ ունենալու դրսի աշխարհում: (Տիւրութեամբ) Բայց նա չպիտի կարողանայ մարել իմ մէջ սեփական զաւկի կարօտը եւ բերել ինձ այն հայրական երջանկութիւնը, որին ահա քանի՛ տարի է զուր տենչում է հոգիս . . .

Աննիկ (Տիւրութպավով).— Մի՛ յուսահատուիր, սիւրելի՛ս, Սատուած ողորմած է:

ԳՈՒՐԳԻԿԻՆ (Տիւրութեամբ).— Աստուած եթէ ողորմած լինէր, մեղ այսպէս անմխիթար չէր ձգի: Երբեմն այնպէ՞ս եմ նախանձում զաւակ ունեցողներին . . . Անցեալ օրը, քաղաքային պարտիզում, տեսայ մի փոքրիկ տղայ, որ հօր ծնկան նստած, չոյտում էր նրա գէմքը: Ի՞նչե՞ր չէր տայց, եթէ ես այդ բախտաւոր հօր գերում լինէի . . . Երէկ գիշեր էլ երազիս տեսայ, թէ մենք մի երեխայ ունինք՝ թուխլիկ գէմքով եւ սեւ աչկներով: Մբռուհին ուղղում էր գրկիցս առնել նրան, իսկ նա փարելով թաթիկները պարանոցիս, կրկնում էր ցեմ ուղիւմ, ցեմ ուղիւմ: Դժբախտաբար ես արթնացայ այդ քաղցը երազից, եւ այլեւս քուն չեկաւ աչքիս: Մինչեւ լոյս, այդ երեխայի հայլիկին, հայլիկին բացագանչութիւնն էր հնչում ականջներում: (Տիւրութեամբ հալում է զրուխ):

ԱՆՆԻԿ (Խիս զգացուա).— Իմ լսե՞ղմ, իմ լսե՞ղմ
Գուրգէնս . . . (Գրկում է շատիս) Այս ես ի՞նչ անեմ, ես
ի՞նչ անեմ . . . (Արտաւում է): Բայց դու չես դադարի
ինձ սիրելուց այս դժբախտութեան պատճառով, այնպէս
չէ:

ԳՈՒՐԳԻՆ.— Ինչե՞ր ես ասում, ԱՆՆԻԿ . . .

ԱՆՆԻԿ.— Զէ՞ , առաջ դու ինձ այլ կերպ էիր սիւ
ըում: Յիշո՞ւմ ես, դու միշտ կրկնում էիր, թէ ես քեզ
համար ե՛ւ կին եմ, ե՛ւ ընկեր, ե՛ւ զաւակ, ե՛ւ ամէն ինչ:
Հիմա դու այդպիսի խօսքեր այլեւս չես ասում: Քո ծնու
ղական տենչանքը տեսնելով՝ ես մինչեւ անդամ երկեւղ
եմ կրում, որ եթէ մենք զաւակ ունենանք՝ քո ամբողջ
սէրը կը կեդրոնանայ նրա վրայ, եւ ես քեզնից զրկուած
կը մնամ:

ԳՈՒՐԳԻՆ (Զերմօրեն).— Բնդիսակառակը, ԱՆՆԻԿ, եւ
թէ դու ինձ մի զաւակ պարգևես՝ դու ինձ համար կը
լինս թանկագին ոչ միայն իրբեւ կին եւ ընկեր, այլ եւ
իրբեւ աղքիւր մի անպատմելի երջանկութեան:

ԱՆՆԻԿ (Քնիշօրեն գրկելով Գուրգինի պարանցը).— Եւ
ինձ շա՞տ կը սիրես, շա՞տ շա՞տ շա՞տ:

ԳՈՒՐԳԻՆ.— Այո՛, անսահման շատ:

ԱՆՆԻԿ.— Եւ մի՞շտ, մի՞շտ մի՞շտ:

ԳՈՒՐԳԻՆ.— Յաւիտեան, ԱՆՆԻԿ, յաւիտեան:

ԱՆՆԻԿ (Խիս զգացուած).— Դէ գրկի՛ր ինձ: Գրկիր
ամո՞ւր ամո՞ւր, որպէսզի քո սիրոյ օրհնութիւնը մինչեւ
ոսկորներիս ծուծը թափանցի:

ԳՈՒՐԳԻՆ (Գրկում եւ համբուրում է).— Հիմա գո՞չ
ես:

ԱՆՆԻԿ (Երազմիյով).— Ելի՞ , էլի՞ . . .

ԳՈՒՐԳԻՆ (Հապմեկ համբուրելով).— Ել բաւական է.
թէ չէ՞ կ'ուշանամ արդիւնաբերողների խորհրդակցութեան
ը: Գիտե՞ս, նահանգապետն էլ այս երեկոյ այնտեղ է լիւ
նելու. ուշանալն անյարմար է:

ԱՆՆԻԿ.— Բայց դու հօ շատ չես երկարացնի այն
տեղ:

ԳՈՒՐԳԻՆ.— Անկարելի է ԱՆՆԻԿ, որ կէս գիշերից
չուտ կարողանամ վերադառնալ: Ինչո՞ւ դու չուզեցիր Սօ-
նայի հետ թատրոն գնալ: Այդ նոր համլետիստին շատ են
գովում:

ՏԵՍԻԼ. 3.

ՆՐԱԿՎԻ ԱՆ ՃՈՒՇՈՆ

ՇՈՒՇՈՆ (Հազնուած ելնելու համար՝ մժնում և ձակ
դոնից).— Գուրգէն, դու գեռ այստեղ ես:

ԳՈՒՐԳԻՆ (Նաղեղով ճաւացոյցին).— Օ՛, խայտառա-
կութիւն . . . (Շտապով ելնում է հարթի դոնիվ):

ՇՈՒՇՈՆ (Աննիկին).— Ի՞նչ ասաց քո այդ Մուկուա-
յի բժշկապետը:

ԱՆՆԻԿ.— Յոյսեր է տալիս, տեսնենք:

ՇՈՒՇՈՆ.— Դրանց գլուխն էլ թաղիմ, իրենց տուած
յոյսերի գլուխն էլ: Ինձ որ հարցնէք՝ մինչեւ այստեղ մի
արմատական միջոցի չգիմուի՝ ոչինչ չի դուրս գալու:

ԱՆՆԻԿ.— Ի՞նչ արմատական միջոց:

ՇՈՒՇՈՆ (Նսեղով թախուի վրայ).— Եթէ կ'ուզես
նստի՛ր մի քիչ խօսենք այդ մասին:

ԱՆՆԻԿ (Նստում և Շուշանի դիմաց մի արռոխ վրայ).—
Խօսի՛ր խնդրեմ:

ՇՈՒՇՈՆ.— Դու հասկացող կին ես, ԱՆՆԻԿ, եւ զիւ-
տես, թէ ի՞նչ գրբախտութեան է մատնուած այս տունը,
քո ամուլութեան պատճառով:

ԱՆՆԻԿ (Մրմնջալով).— Ի՞մ ամուլութեան պատճա-
ռով . . .

ՇՈՒՇՈՆ.— Խնդիրը այն չէ միայն, որ Մէլիք-Ա-
ղամեանների տոհմը սերհատում է առանց ժառանգի, այլ
և որ խեղճ երեխաս շա՞տ է մորմոքում զաւկի կարօտից:

ԱՆՆԻԿ (Տիրութեալը).— Այդպէս է, գրբախտաբար-
բայց ի՞նչ կարող ենք անել:

ՇՈՒՇՈՆ.— Այն ինչ որ անում են խելացի մար-
դոկ՝ նման գէպերում:

ԱՆՆԻԿ.— ԱՅՍԻ՞ՆՔՆ:

ՇՈՒԾԱՆ.— Այսինքն որ դու և Գուրգէնը կարող չք, փոխադարձ հասկացողութեամբ և բարեկամաբար, աւպահարզան տալ միմեանց:

ԱՆՆԻԿ (Սարսափած վեր բռչերս).— Ինչպէս թէ աւպահարզան . . .

ՇՈՒԾԱՆ.— Արտառոց բան չկայ ասածիս մէջ: Միյայտնի հրէա իրաւաբանի հետ խօսել եմ, ի հարկէ ասանց մեր անունը տալու: Նրա ասելով՝ օրէնքը թոյլաւարելի է համարում ամուսնալուծութիւնը նման դէպքերում:

ԱՆՆԻԿ (Յուզուած).— Ա՝ լս, դու արդէն իրաւաբանի էլ գիմել ես . . . Յետո՞յ:

ՇՈՒԾԱՆ.— Յետոյ էլ այն, որ դու կը ստանաս քո արդար բաժինը Գուրգէնի կարողութիւնից եւ կ'ապրես՝ որ որ կը կամենաս: Սակայն, եթէ արտասահման գնաս, որ շատ ցանկալի կը լինէր մեզ համար, ես այնպէս կ'անեմ, որ մի բան էլ աւելի ստանաս:

ԱՆՆԻԿ (Զուազ հեգնուրեամբ).— Իսկ Գուրգէ՞նը:

ՇՈՒԾԱՆ.— Նրա համար էլ անշուշտ մի ճամբայ կը բացուի, երբ այս փակուղից դուրս գայ: Ես արդէն խօսել եմ այս մասին Գուրգէնի հետ: Եթէ դու դժուարութիւններ չչարուցանես՝ դիւրին կը լինի կարգադրել ամէն բան:

ԱՆՆԻԿ (Գրզուած).— Դու չարաշար սխալում ես, մայրէկ: Գուրգէնը այնպէս է սիրում ինձ, որ ո՛չ մի պայմանով չի համաձայնուի բաժանուել ինձնից:

ՇՈՒԾԱՆ.— Ես նրա սէըը խնդրոյ առարկայ չեմ դարձնում: Սակայն կան նկատումներ, որոնց առաջ սէըն էլ վերջ ի վերջոյ պէտք է տեղի տայ: Մի՞թէ դու չես դժում, որ Գուրգէնի սէըը դէպի քեզ հետզհետէ նուազում է, քո չբերութեան պատճառով:

ԱՆՆԻԿ (Ծփորուած).— Ոչ, չեմ զգում:

ՇՈՒԾԱՆ.— Իսկ ես զգում եմ: Եւ համոզուած եմ, որ զաւկի պահանջն արդէն այնքա՞ն տիրական է դար-

ձած նըա մէջ, որ եթէ նա խղձի տառանումներ չունենար, առանց իմ յորդորների էլ ամուսնալուծութեան առաջարկ կ'անէր քեզ:

ԱՆՆԻԿ (Խիս գրզուած).— Ահա՝ թէ ինչ . . . Ուրիմն բանը մնացել է միայն խղձի՞ն . . . Հրաշալի՞ է, հրաշալի՞ է . . . իի՞դա . . . ինչո՞ւ պարզապէս չասել խղձահարութիւն . . . Խղձո՞ւմ են ինձ . . . Խղձո՞ւմ է ինձ . . . հա՛, հա՛, հա՛ . . . (Զգային ծիծադ):

ՇՈՒԾԱՆ.— Աննիկ, ես քեզ հասուն կին էի կարծում և ուզում էի խօսել հետզ լրջօրէն: Բայց դու այսօր շատ ես զղայնացած՝ ինձ հասկանալու համար: Շատ լաւ կարող ենք յետաձեկ մեր խօսակցութիւնը: Սակայն վատ չէր լինի, եթէ դու ասածներս մասին մտածէիր: Այս բանը ուշ կամ շուտ պիտի կատարուի: Միայն թէ, որքան շուտ՝ այնքան լաւ է թէ՝ մեզ համար և թէ՝, մանաւանդ, քեզ համար: (Շարժուելով դեպի խորի դուռը) Դէ, ես գնացի, եթէ Սօնան, մինչև թատրոն գնալը տուն հանդիպէ՝ ասա, որ ներկայացումից յետոյ գայ ակումբ (Եղիում է):

Աննիկը պահ մի ջլայնօրեն շրջերոց յետոյ՝ լինիում է բախսի վրայ: Նա մի ծանր բանի մասին մտածելու, մի ներին պայտախից տանջուկութիւնունիք: Բիչ յետոյ՝ յանկարծակի վեր և կենում տեղից եւ վճռական խայերով մօսենութ հեռախօսին: Պահ մի տասնանուերոց յետոյ, բանում է հեռախօսը:

ԱՆՆԻԿ (Հեռախօսում է).— Ալլո . . . Կենտրո՞նն է . . . Տուէք, խնդրեմ 165 . . . Ալլո՞ . . . Ո՞վ է խօսողը . . . Պարոն Շահէն գո՞ւք էք: Զէ՞ք ճանաչո՞ւմ, Աննիկն է խօսողը . . . Լա՞ւ, դուք ինչո՞ւ չէք երկում մեզ մօտ . . . Եթէ կ'ուզէք՝ համեցէք հիմա . . . Ոչ, Օք. Սօնան տանը չէ. այս գիշեր՝ ամէնքն էլ խօսքը մէկ արած՝ լքել են ինձ, և ես ձանձրանում եմ մենակութիւնից . . . Եթէ չէք լնթըրէ՝ կարող էք մեզ մօտ մի բան ուտել . . . Բայց հօ կարո՞ղ էք մի գաւաթ թէյ խմել ինձ հետ . . . Շատ բարի . . . Ուրիմն պատճում եմ:

ՏԵՍԻԼ 4.
ԱՆՆԻԿ ԵՒ ՍՈՆԱ

ՍՈՆԱ. (Մտեսվ է խորի դռնից հագնուած քայլող զնաւոր համար).— Պ. Սերոբեանը չեկա՞ւ, Աննիկ:

ԱՆՆԻԿ.— Ոչ: Մի՞թէ նա այսօր քեզ հետ չէր տիկ. Ալամեանի թէյասեղանին:

ՍՈՆԱ.— Ինձ հետ էր, բայց շուտ ելաւ, պայմանաւորուելով, որ կը գայ այստեղ՝ ինձ թատրոն ուղեկցելու: **ԱՆՆԻԿ.**— Ինչպէ՞ս անցաւ թէյասեղանը:

ՍՈՆԱ.— Սովորականի պէս:

ԱՆՆԻԿ.— Պ. Ասլանեա՞նն էլ այնտեղ էր:

ՍՈՆԱ. (Տիարութեամբ).— Բարեբախտաբար, ոչ: (Նլաւում է):

ԱՆՆԻԿ.— Ինչո՞ւ բարեբախտաբար:

ՍՈՆԱ.— Որովհետեւ, մեր վերջին տեսակցութիւնից յետոյ, նրա հանդիպելը միայն գառնութիւն կարող է պատճառել ինձ:

ԱՆՆԻԿ.— Սակայն չեմ հասկանում, թէ դու ի՞նչ հիմք ունիս գառնանալու Պ. Ասլանեանի գէմ: Զէ՞ որ ի՞նքդէ էիր ասում, թէ նա ուեւէ խոստում չէ արել քեզ:

ՍՈՆԱ.— Խոստում չէ արել, ճիշդ է, բայց նա չէր կարող չիմանալ, որ իր յաճախակի այցելութիւնները չուրացայտուած խոստման արժէք ունէին իմ աչքում:

ԱՆՆԻԿ.— Ես համոզուած եմ, Սօնա, որ մինչեւ քո նամակը, որ դու, չսեւով իմ խորհրդին, գրեցիր Պ. Ասլանեանին, նա լրիւ գաղափար չունէր քո զգացմունքների ուժգնութեանը մասին, թէև գիտէր, ի հարկէ, որ դու նրան շատ համակրում ես:

ՍՈՆԱ.— Եթէ նա այնքա՞ն նուրբ հոգեբան չլինէր՝ ես էլ կարող էի այդպէս մտածել: Բայց ի՞նչ կարիք կայ այլեւս խօսելու այս մասին: Պ. Ասլանեանի հարցը ընդունիչ փակուած է ինձ համար: Կը ցանկանայի միայն, որ քան կարելի է քիչ հանդիպել նրան:

ՀԿՈՎԱԽՈՍ

ԱՆՆԻԿ (Հեռախօսում է).— Ալլօ՞ . . . Այո՞ . . . Այ՞ո՞ . . . Սպասեցէք մի վայրկան: (Ընկալուչը մեկնելով դեպի Սօնան) Սօնա, քեզ են հարցնում:

ՍՕՆԱ (Հեռախօսում է).— Ալլօ՞ . . . Այո՞, ես եմ . . . Ինչո՞ւ չէք կարող գալ . . . Ո՞ւր կը սպասէք ինձ . . . Լա՞ւ, իսկոյն կը մեկնեմ: (Ընկալուչը տեղը դնելով) Աննիկ, ես պէտք է շտապեմ թատրոն: Պ. Սերոբեանն ասում է, որ ինձ սպասում է թատրոնի առաջ, որովհետեւ եթէ գայ այստեղ՝ կ'ուշանանք ներկայացմանը (Շարժում է դեպի խորի դուռը)

ԱՆՆԻԿ.— Սօնա, մայրիկը պատուիրեց ասել քեզ, որ ներկայացումից յետոյ գնաս ակումբ:

ՍՕՆԱ.— Լա՞ւ (Ելնում է խորի դուռը):

Աննիկը, պահ մի մտակողոր վիճակի մեջ մնալուց յետոյ, կանչում է խորի դունից դեպի դուրս:

ԱՆՆԻԿ.— Սըբուհի՞:

ԱՆՆԻԿ ԵՒ ՍՐՅՈՒՀԻ

ՍՐՅՈՒՀԻ (Մտելով խորի դռնից).— Տիկի՞ն:

ԱՆՆԻԿ.— Ինքնահուր տա՞ք է, Սըբուհի:

ՍՐՅՈՒՀԻ.— Այո, տիկին:

ԱՆՆԻԿ.— Մի երկու ածուխ աւելցրու, որպէսզի կը ակը չմարի:

ՍՐՅՈՒՀԻ.— Շատ բարի:

ԱՆՆԻԿ.— Խոհանոցում գործդ վերջացրել ես, այնպէս չէ՞:

ՍՐՅՈՒՀԻ.— Այո:

ԱՆՆԻԿ.— Որ այդպէս է, առ այս գըամը (Դրամը վերցնում է պիտիի դրամից) և գնաս սինեմա: Այս երեկոյ մի շատ զուարձակի փիլմ է զըուած Մեծ Փողոցի սինեմայում:

ՍՐՅՈՒՀԻ (Սոնկով դրամը).— Շատ, չնորհակալ եմ, տիկին: (Ելնում է խորի դուռը):

ԱՆՆԻԿ (Խորի դռնից դուրս խօսերալ).— Շտապի՛ր, սակայն, Սքրուճի Մի քանի ըստէից խաղը կը սկսուի:

Վերադառնաղով քեմ՝ Աննիկը շտապով ծածկում է սեղաւ նը ափոցալ. բիւֆից հանեղով՝ սեղանի վրայ և դամում մի շիշ թեմեղիկին. լիկոնի և թէյի երկուական զաւարներ, չոր խմութեկն (քըլ խոր), մրգեղիկի վազը և մի վինիլի ակուսկով Դրանից յետոյ՝ բիւֆից հայելու առաջ յարդարում մազերը և բրնձն փոշի (պուդրա) դնում դեմին: Վերջը անհանդիս հողեւ վիճակով, նսում է սեղանի առաջ եւ մի զաւար լեցնու թեմեղիսինով:

Զանգահարութիւն

Աննիկ շտապով խմում է թեմեղիկինը՝ դեմին տհամութեան արտայայտութիւն տաղով եւ եղնում խորի դունով:

ՏԵՍԻԼ 7.

ԱՆԴԻԿ ԵՒ ՇԱՀԵՆ

ԱՆՆԻԿ (Առաջնորդեղով Շահենին խորի դռնից դեպի քեմ).— Ուրեմն այնտեղ ենք հասել, Պ. Շահեն, որ առանց յատուկ հրաւէրի, դուք այլեւս չալխոի բարեհաճէիք մեզ այցելել:

ՇԱՀԵՆ.— Բայց չէ՞ որ ինքներդ հասկացնել տուշիք ինձ, որ իմ յաճախակի այցելութիւնները հաճելի չեն ձեղ համար:

ԱՆՆԻԿ.— Ինձ համա՞ր . . . ինչ վա՛տն էք, Պ. Շահեն. Դուք այդպէ՞ս էք գնահատում իմ բարեկամութիւնը: Նստեցէ՛ք, ինդրեմ:

ՇԱՀԵՆ (Նստեղով սեղանի առաջ).— Զեր բարեկամութիւնը ես չափազանց բարձր եմ գնահատում, սակայն խօսքն իմ մասին չէ, այլ ձեր մասին:

ԱՆՆԻԿ.— Լա՛ւ, ձեր անարդար մեղադրանքի պատասխանը կը ստանաք խկոյն: Սպասեցէ՛ք, թէյ բերե՛մ . . . Գիտէ՛ք, անդամ մեր սպասուհին այսօր տանը չէ: (Թէյի զաւարները՝ սկուսելի վրայ դրած՝ տանում է դուրս, խորի

դունով եւ, իից անց, վերադառնում նոյն ձեւով) Ուրեմն այդպէս, հա՞ Պ. Շահեն:

ՇԱՀԵՆ.— Ի՞նչ:

ԱՆՆԻԿ (Դնում է թէյի զաւարները սեղանի վրայ եւ նսում իր տեղը).— Ուրեմն ե՞ս եմ պատճառը, որ դուք մեզ մօմ չէք գալիս:

ՇԱՀԵՆ (Ժպտալով).— Հասկա ո՞վ:

ԱՆՆԻԿ.— Կարծում եմ, Օր. Սօնան: Ասացէ՛ք, իսընգրեմ, ինչո՞ւ էք վլտացըել նրան:

ՇԱՀԵՆ.— Ես շատ հեռու եմ եղել Օր. Սօնային վիտ պատճառելու մտքից: Բայց, նրա այնքա՞ն յուզիչ նամակից յետոյ, որին զուք տեղեակ էք անշուշտ, ես ինչպէ՞ս անէի, որ նա ե՛ւ չլշտանար ե՛ւ մոլորութեան մէջ չմնար կարծելով՝ թէ ես երբ և իցէ կարող եմ պատասխանել իր զգացմունքներին:

ԱՆՆԻԿ.— Իսկ ինչո՞ւ էք կարծում, թէ երբ եւ իցէ չէք կարող պատասխանել նրա զգացմունքներին:

ՇԱՀԵՆ (Տիրութեալք).— Որովհետեւ մեռած որտի մէջ երբ և իցէ զգացմունքներ չեն ձնւում:

ԱՆՆԻԿ.— Զեր սի՞րտն է մեռած:

ՇԱՀԵՆ.— Հասկանալի է:

ԱՆՆԻԿ.— Ամէնքի՞ համար:

ՇԱՀԵՆ.— Այս:

ԱՆՆԻԿ (Ժպտալով).— Մինչեւ անգամ ի՞նձ համար:

ՇԱՀԵՆ (Մեղմ կշականին).— Դուք անյարմարութիւն չէք զգում՝ դիակի մասին կատակախօսութիւններ անելուց:

ԱՆՆԻԿ.— Կը զգայի, եթէ իրոք դիակի մասին մինէր խօսքը: Բայց ես զիտեմ . . .

ՇԱՀԵՆ.— Ի՞նչ զիտէք:

ԱՆՆԻԿ.— Ես զիտեմ, որ ձեր սիրու Աննիկի համար մեռած չէ:

ՇԱՀԵՆ (Անակնիալի եկած).— Այդպէս խօսողը դո՞ւք էք, տիկ. Աննիկ: Ի՞նչ է պատահել ձեզ:

ԱՆՆԻԿ.— Ուինչ չէ պատահել: (Լեցնելով թեմեղիկինը

զաւարների մէջ).— Դուք, անշուշտ, մի զաւաթ կը պարագար ինձ հետ:

ՇԱՀԻՆ.— Տաք թէյի վըա՞յ:

ԱՆՆԻԿ (Ծիծաղով).— Ի՞նչ կայ ոք: Դէ, բարձրացրէք ձեր գաւաթը. կենաց պիտի առաջարկեմ:

ՇԱՀԻՆ (Բարձրացնելով զաւարը եւ հետաքրքրուած).— Լսում եմ:

ԱՆՆԻԿ.— Ձեր կենացը Ո'չ, ո'չ, ձեր սըտի կենացը (կուռ է):

ՇԱՀԻՆ (Յած դնելով պարպուած զաւարը).— Իրօք, ի՞նչ է պատահել ձեզ հետ այսօր:

ԱՆՆԻԿ.— Ասացի, որ ոչինչ չէ պատահել: Մի գաւաթ եւս: (Լեցնում է զաւարները) Դէ, հիմա էլ դո՞ւք մի շնորհալի ճառ ասացէք: (Բարձրացնում է զաւարը):

ՇԱՀԻՆ.— Դուք ուզում էք ինձ հարբեցնե՞լ, ի՞նչ է: ԱՆՆԻԿ.— Ո'չ, ես ինքս եմ ուզում հարբել:

ՇԱՀԻՆ.— Բայց . . .

ԱՆՆԻԿ.— Բայց մայց չկայ:

ՇԱՀԻՆ.— Ես . . . ես խմում եմ . . . Յարալէղի կենացը:

ԱՆՆԻԿ.— Յարալէ՞ղն ով է:

ՇԱՀԻՆ.— Զէք յիշում Շամիլամի եւ Արայի պատմութիւնը:

ԱՆՆԻԿ.— Յիշում եմ: Բայց ո՞վ է ձեր կենաց ճառի Յարալէզը:

ՇԱՀԻՆ.— Դուք:

ԱՆՆԻԿ.— Ես Յարալէ՞ղ . . . Ֆո՞ւ, ի՞նչ անշնորհք համեմատութիւն:

ՇԱՀԻՆ.— Թերես . . . Բայց այդ աւանդավէպի մէջ, յարալէզներին է վերապահում մեռածներին յարութիւն տալու գորութիւնը:

ԱՆՆԻԿ (Ժպտաղով).— Հասկացա՞յ: Ուրիշ խօսքով՝ ուզում էք ասել, որ ձեր մեռած սիրտը կեանքին կը դառնայ, եթէ Աննիկը հրամայէ: Այնպէս չէ՞:

ՇԱՀԻՆ.— Այդպէս է:

ԱՆՆԻԿ.— Դէ, խմենք ուրեմն (Դաւարմելով իւրա են զարկում եւ խեռում: Աննիկի դնմին տարայացութիւն):

ՇԱՀԻՆ.— Երբ չէք ախորժում, ի՞նչո՞ւ էք խմում:

ԱՆՆԻԿ.— Հէնց այնպէս: (Տարով Շահենին մի խնձոր է դասակարգութիւն կատարեցէք այս խնձորը: (Մինչդեռ Շահենը ակում է կեղեւել՝ Աննիկը նորից ձեռին է առնում բեմեղիկին շնչը) Հիմա մի երբորդ գաւաթ էլ կը պարպենք եւ ապա . . .

ՇԱՀԻՆ (Բոնելով Աննիկի ձեռիլ).— Աւելորդ է, տիկ. ԱՆՆԻԿ:

ԱՆՆԻԿ.— Ո'չ, աւելորդ չէ: Թողէ՞ք ձեռքս: (Հրամայական տնելով) Թողէ՞ք, ասում է ձեզ ձեր Յարալէզը:

ՇԱՀԻՆ.— Բայց . . . (Թողնում է Աննիկի ձեռիլ):

ԱՆՆԻԿ.— Նորի՞ց ձեր բայցը: Առէ՞ք գաւաթը (Բարձրացնելով իր զաւարը) Այս մէկն էլ խմենք . . . Ո՞ւմ կենացը:

ՇԱՀԻՆ.— Ում որ կ'ուզէք:

ԱՆՆԻԿ.— Ի՞նչպէս թէ ում որ կ'ուզէք . . . (Երազիոն) Այս մէկն էլ խմենք "նրա" կենացը:

ՇԱՀԻՆ.— "նա" ո՞վ է:

ԱՆՆԻԿ.— "նա" նա է, որ կարող է փրկութեան խարիսխ հանդիսանալ մահուան սարսափով բռնուած սրտերի համար:

ՇԱՀԻՆ (Ժպտաղով).— Բնդհանըապէ՞ու:

ԱՆՆԻԿ (Ծիծաղով).— Բնդհանըապէս և մասնաւութապէս:

ՇԱՀԻՆ.— Զիմ հասկանում: Հասկանալու ժամանակ չէ, ԱՆՆԻԿ (Զդայնօրեն).— Հասկանալու ժամանակ չէ, շտապեցէ՞ք: (Խեցնում է Շահենին եւ ինիլը խեռում):

ՇԱՀԻՆ (Իրենից հեռացնելով զաւարը).— Էլ բաւական չէ: Հիմա բացատրէք, ի՞նդքեմ, այս առեղծուածը:

ԱՆՆԻԿ (Ճակատը շփելով).— Առեղծուած . . . ի՞նչ առեղծուած:

ՇԱՀԻՆ.— Ի՞նչ է նշանակում ձեր այս տարօրինակ տըամադրութիւնը:

ԱՆՆԻԿ.— Ի՞նչ է նշանակո՞ւմ . . . (Յուզմունի արտայատոքին):

ՇԱՀԵՆ.— Այո:

ԱՆՆԻԿ.— Աս նշանակում է, սիրելի Պ. Շահէն, որ ձեր սիրած Աննիկը դժբախտ է . . . Այսքա՞ն դժբախտ . . . (Յանձարծակի հակում է զրուխը սեղանին և հեկերում):

ՇԱՀԵՆ (Սասիկի շփորուած).— Տիկի՞ն Աննիկ, ի սէր Աստուծոյ, ի՞նչ է պատահել . . . Ի՞նչ դժբախտութեան մասին է ձեր խօսքը . . . (Աննիկը աւելի ևս ուժզին հեկերում է) Հանգստացէ՞ք, հանգստացէ՞ք, խնդրում եմ, եւ պատմեցէք, թէ ի՞նչ ունէք . . . (Շոյերով Աննիկի մազերը) Կարող էք կատարելապէս վստահիլ ինձ: Դուք գիտէք, որ ես ոչ մի բանի առաջ կանդ չեմ առնի, ձեզ օգնելու համար: (Կամաց համբուրում է Աննիկի մազերը):

ԱՆՆԻԿ.— Ա՞յս, թողէք ինձ . . . (Շտապով եղնում է Տեղից, շնկնում բախտի վրայ և դեմքը բաղերով բարձերի մեջ՝ հեծիլում):

ՇԱՀԵՆ (Նստում է բախտին, Աննիկի մօս, եւ մի ձեռիք դնելով երա ուսին՝ միտով շոյում մազերը).— Աննիկ, իմ անդին Աննիկ . . .

ԱՆՆԻԿ (Ցնցուելով).— Ո՞չ, չեմ կարող . . . Դա գեր է իմ ուժերից . . . Թողէ՞ք ինձ . . . Թողէ՞ք ի սէր Աստծոյ և հեռացէ՞ք . . .

ՇԱՀԵՆ (Ցես բացուելով).— Բայց ինչպէ՞ս թողնեմ ձեզ այս վիճակում . . .

ԱՆՆԻԿ.— Զգեցէ՞ք ինձ իմ վիճակին եւ հեռացէ՞ք . . . Հեռացէ՞ք իսկոյն, իսկոյն:

ՇԱՀԵՆ (Ոտի եղնելով).— Եթէ դա կը հանգստացնի ձեզ . . . (Տարտա բայլերով շարժում է դեպի խորի դուռը):

ԱՆՆԻԿ (Շտկուելով Տեղը).— Սպասեցէ՞ք . . . սպասեցէ՞ք մի վայրկեան . . . (Դրուխը ափերի մեջ առնելով) Ա՞յս Աստուծ իմ, ի՞նչ է կատարում ինձ հետ . . .

ՇԱՀԵՆ (Ցես դառնալով).— Յանցանքը ձերն է. Ի՞նչ պէ՞ս կարելի է տաք թէյի վրայ բենեդիկտին ըմպել, եւ այն էլ երեք գաւաթ վրայ-վրայ:

ԱՆՆԻԿ.— Ա՞յս այդ չէ . . . ա՞յդ չէ . . . Մօտեցէ՞ք ինձ . . . Մօտեցէ՞ք էլլի . . . նստեցէ՞ք ահա այստեղ (Ցոյց է տալիս բախտը, որի ծայրին նստում է Շահէնը) Ոչ, աւելլի' մօտ . . . Աւելլի' ևս . . . (Շահէնը մօտենում է) Ահա այդպէս: (Ձեռքերը դնելով Շահէնի ուսերին եւ արտասահից այժերը յառկով նրա դիմին) Դուք Աննիկին շա՞տ էք սիբում:

ՇԱՀԵՆ.— Ինքներդ գիտէք, որ իմ սէրը սկսում և վերջանում է տիկին Աննիկավ:

